**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2020թ. թիվ 451-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 240-Ն որոշման 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2.1 կետով, հիմք ընդունելով համաձայնության մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 11.06.2020թ.-ի թիվ 01/11.1/14169-20 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Հանրակրթություն» ծրագրի (դասիչ՝ 1146) «Հիմնական ընդհանուր հանրակրթություն» միջոցառումով (դասիչ՝ 11002) նախատեսված գումարի շրջանակում «ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին լրացուցիչ հատկացնել 6799.2 հազ. դրամ՝ 2020 թվականի մայիսի 22-ի ուժեղ քամու հետևանքով պոկված շուրջ 600մ$^2$ թիթեղյա տանիքի հիմնանորոգման նպատակով:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

11/06/20

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 11
ք.Վանաձոր